ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. մայիսի 2-7-ը՝ Ֆիլիպինների Հանրապետություն և մայիսի 8-11-ը՝ Հորդանանի Հաշիմյան Թագավորություն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Արմեն Հայրապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Մանիլա, Սովայմա, մայիսի 2-7-ը, 8-11-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**

Ասիական զարգացման բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Ասիական զարգացման բանկի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի տարեկան հանդիպումներին

6. **Քննարկված թեմաները՝**

1. **<u>Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ)</u>** տարեկան հանդիպման շրջանակներում նախագահ Տակեհիկո Նակաոյի կողմից ներկայացվեցին տարվա ընթացքում ԱԶԲ կողմից գրանցված ձեռքբերումները, նորամուծությունները, տարածաշրջանում նոր տեխնոլոգիաների ներդրման միտումներն ու դրանց ազդեցությունը: Միաժամանակ, ներկայացվեց «ԱԶԲ 2030թ. ռազմավարություն» երկարաժամկետ փաստաթուղթը, որը թույլ կտա առավել արդյունավետ օգտագործել ԱԶԲ ֆինանսական միջոցները այնպիսի հարցերի համար, ինչպիսիք են աղքատության կրճատումը, տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը, կլիմայի փոփոխությունը, գյուղական համայնքների զարգացումը,

տարածաշրջանային ինտեգրումը, «պետություն-մասնավոր հատված» համագործակցությունը և այլն:

Հանդիպումներ են տեղի ունեցել բանկի բարձրագույն ղեկավարության հետ, մասնավորապես՝ Ասիական զարգացման բանկի փոխնախագահ **Վենկայի Ժենգի,** ԱԶԲ-ի տնօրենների խորհրդի անդամ **Սյուրքանի Իշակ Կասիմի**, Կենտրոնական և Արևմտյան Ասիայի դեպարտամենտի գլխավոր տնօրեն **Վերներ Լիպաչի** հետ: Վերոնշյալ հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր: Հայկական կողմն ընդգծել է ԱԶԲ օժանդակությամբ ՀՀ-ում իրականացվող ծրագրերի շարունակականության կարևորությունը և վերջիններիս շրջանակներում գրանցված արդյունքները: Կարևորվել է նաև ԱԶԲ կողմից մասնավոր հատվածում ներդրումների ընդլայնումն ու «պետություն-մասնավոր հատված գործընկերության» ձևաչափով համագործակցության խթանումը:

Հայկական կողմից անդրադարձ է կատարվել է նաև առաջիկայում ԱԶԲ-ից նոր բյուջետային աջակցության միջոցների ներգրավման հարցին և առաջարկվել է դիտարկել այդ հարցի շուրջ քննարկուներ սկսելու հնարավորությունները:

ԱԶԲ ներկայացուցիչների կողմից բարձրացվել է հունիս ամսին ԱԶԲ նախագահի հնարավոր այցի նպատակահարմարության հարցը: Հայկական կողմից նշվել է, որ այցի համար առավել նպաստավոր կարելի է դիտարկել սեպտեմբեր ամիսը, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ այդ ժամանակահատվածում որոշակիացած կլինեն կարճաժամկետում ՀՀ նոր կառավարության տնտեսական քաղաքականության առանցքային ուղղությունները, սեպտեմբերին նախատեսվում է ավարտել Արժույթի միջազգային հիմնադրամի հետ նոր ծրագրի շուրջ քննարկումները, ինչպես նաև այդ ամսին մեկնարկում են հաջորդ տարվա բյուջետային գործընթացի նախապատրաստական աշխատանքները:

2. <u>Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ)</u> տարեկան հանդիպման շրջանակներում մասնակցություն է ցուցաբերվել պլենար նիստի աշխատանքներին, որի շրջանակներում առանցքային էր ՎԶԵԲ-ի առաջիկա տարիների ռազմավարությունը: Կարևոր շեշտադրումներից էր նաև բանկի կողմից մասնավոր հատվածում ներդրումային ծրագրերի խթանումն ու մասնավոր հատվածի հետ գործակցության ընդլայնումը:

Տարեկան հանդիպման ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել բանկի բարձրագույն ղեկավարության հետ, մասնավորապես՝ ՎԶԵԲ-ի նախագահ **Սումա Չակրաբարտիի**, Արևելյան Եվրոպայի և Կովկասի երկրների գծով համակարգող տնօրեն **Ֆրենսիս Մալիժի** և ՎԶԵԲ-ի տնօրենների խորհրդի անդամ **Ֆրանս Վիկերսի** հետ: Հանդիպումների ընթացքում անդրադարձ է կատարվել երկկողմ համագործակցության ընթացիկ ծրագրերին: Հայկական կողմը ողջունեց ՎԶԵԲ-ի կողմից մասնավոր հատվածի հետ համագործակցության ընդլայնման ուղղված քաղաքականությունը և նշվեց, որ ՀՀ ընդհանուր տնտեսական քաղաքականության համատեքստում, ելնելով նաև արտաքին պարտքի ներկա ծանրաբեռնվածությունից և պարտքի սահմանափակմանն ուղղված քաղաքականությունից, կարևորվում է միջազգային դոնոր կազմակերպությունների հետ մասնավոր հատվածում համագործակցության ընդլայնումը, նաև «պետություն-մասնավոր-գործընկերության» ձևաչափով: Շնորհակալություն հայտնվեց ՎԶԵԲ-ին նաև «պետություն-մասնավոր գործընկերության» հայեցակարգի մշակման հարցում ՀՀ-ին ցուցաբերված տեխնիկական աջակցության համար:

ՎԶԵԲ-ի ներկայացուցիչների կողմից տեղեկացվեց Արևելյան Եվրոպայի և Կովկասի երկրների գծով համակարգող տնօրեն **Ֆրենսիս Մալիժի** ս.թ. մայիսի վերջին նախատեսված այցի մասին: Հայկական կողմը պատրաստակամություն հայտնեց շարունակել համագործակցությունը երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ:

Տարեկան ժողովի շրջանակներում երկկողմ հանդիպում տեղի ունեցավ «HSBC» բանկի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել 2020թ. ՀՀ կողմից եվրոպարտատոմսերի հնարավոր թողարկման հարցին: Բանկի ներկայացուցիչների կողմից ներկայացվեց միջազգային ֆինանսական շուկայում տիրող ներկա իրավիճակը: Մինչ եվրոպարտատոմսերի թողարկման շուրջ ապագա հնարավոր առարկայական քննարկումները, հայկական կողմը խնդրեց գրավոր տրամադրել ֆինանսական շուկայի զարգացման միտումները և եվրոպարտատոմսերի թողարկման հնարավոր սցենարները:

Ինչպես ԱԶԲ, այնպես էլ ՎԶԵԲ-ի հետ հանդիպումների ընթացքում հայկական կողմից պատրաստակամություն է հայտնվել գործընկերային հարաբերությունները խորացնելու ուղղությամբ: Միաժամանակ ընդգծվել է, որ առավել առարկայական քննարկումներ հնարավոր կլինի իրականացնել ավելի ուշ՝ ՀՀ կառավարության ծրագրի ընդունումից և տնտեսական քաղաքականության հիմնական շեշտադրում-ների որոշակիացումից հետո հետո:

7. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Հայրապետյան

8. Ստորագրություն.

15.05.2018